Արձանագրություն 4

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 28.12.2021թ. ժամը 12:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Վ. Առաքելյան – ՖՆ «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալության պետ,

Անդամներ

Լ. Ասրիյան - ՖՆ «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստների հաշվառման և կառավարման բաժնի պետ,

Ի. Յազիչյան - ՖՆ «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի փորձագիտական և ապրանքագիտական բաժնի գլխավոր հարգափորձ,

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան - ՖՆ ծրագրերի իրականացման վարչության գնումների բաժնի պետ

Մրցույթի մասնակիցներ՝

Ն. Թորոսյան – «Ակսոն ապրանքա-հումքային բորսա» ՍՊԸ-ի տնօրեն,

Վ. Մուրադյան - «Բիդ ապրանքա-հումքային բորսա» ՍՊԸ-ի իրազորված անձ,

Բացակայում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Ռ. Քյոսայան - ՖՆ «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստների հաշվառման և կառավարման բաժնի գլխավոր մասնագետ,

Գ. Գևորգյան – ՖՆ «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի փորձագիտական և ապրանքագիտական բաժնի ավագ հարգափորձ:

1. <u>Տեղեկություններ բանակցությունների և նիստի վերաբերյալ</u>

1. ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գների նվազեցման նպատակով հրավիրվել էր միաժամանակյա բանակցություններ ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների հետ 15 րոպե տևողությամբ սույն թվականի դեկտեմբերի 28-ին ժամը 12:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում:

2. Բանակցություններին ընթացակարգին հայտ ներկայացրած երկու մասնակիցներն էլ

ներկայացել են, որի արդյունքում և՛ «Ակսոն ապրանքա-հումքային բորսա» ՍՊԸ-ի, և՛ «Բիդ ապրանքա-հումքային բորսա» ՍՊԸ-ի կողմից տեղի է ունեցել գնային առաջարկի նվազեցում՝ երկու ընկերություններն էլ ծառայությունների մատուցման համար առաջարկել են 0%:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

2. Հանձնաժողովի կայացրած որոշումները

1. Հանձնաժողովը որոշեց բանակցությունների արդյունքում նվազագույն գների հավասարության պայմաններում ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	_____	Վ. Առաքելյան
Հանձնաժողովի անդամներ՝	_____	Լ. Ասրիյան
	_____	Ի. Յազիչյան
Գնումները համակարգող՝	_____	Ա. Աղաբաբյան
Մրցույթի մասնակիցներ՝	_____	Ն. Թորոսյան
	_____	Վ. Մուրադյան